ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1960 Общественные науки

Ս. Ա. Շահիկյան

ԱԼԻՇԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՄՈՏԻՎՆԵՐԸ

Մեր պարբերականներում զանազան առիթներով քիչ հոդվածներ չեն գրվել Ալիշանի պոեզիայի վերաբերյալ, սակայն բոլոր դեպքերում բանասերներն իրենց ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել են «Երգք Նահապետի» խորագիրը կրող և «Հայրունի» հատորում զետեղված աշխարհաբար բանաստեղծությունների վրա, սակայն դեպքում միայն քննության առարկա դարձնելով մեկ-երկու գրաբար գործ ևս։ Ալիշանի գրաբար պոեզիան աննշան բացառությամբ, մինչև այսօր էլ հետաքրքրությունը չկորցրած բազմաթիվ ստեղծագործություններով հանդերձ հանգամանալից քննության գրեթե չի արժանացել։ Այս հանգամանքն ի նկատի ունենալով, սույն հոդվածում հիմնական շեշտը դնում ենք Ալիշանի գրաբար պոեզիայի վրա, սակայն դեպքում միայն անդրադառնալով աշխարհաբար գործերին։

Թե կոնկրետ ո՞ր թվականից է սկսել ստեղծագործել Ալիշանը՝ դժվար է ասել։ Նրա կենսագիր Ս. Երեմյանը նշում է, որ դեռ Նորընծայարանում սովորելիս (1832—1837) նա գրում էր բանաստեղծություններ ու կարդում միաբանության ներսում տեղի ունեցող զանազան հանդիսավոր արարողությունների ժամանակ։ Այդ շրջանի գործերից մեզ ոչինչ չի հասել և հավանորեն դրանք ինքը՝ հեղինակն էլ առանձնապես չի արժեքավորել։ Ալիշանի՝ մեզ հասած սկզբնական մի քանի բանաստեղծությունները գրված են 1839 թվականին, իսկ որպես ձևավորված բանաստեղծ նա հանդես է գալիս 1840 թվականից սկսած, երբ սովորում էր Բարձրագույն կրթարանում (1837—1841)։ Դեռ Մխիթար Սեբաստացու օրոք հիմնված այս հաստատությունն ուներ մեկ նպատակ՝ պատրաստել հլու, հնազանդ ու խոնարհ աշակերտներ, որոնցից առավել հնազանդներն ու խոնարհները կարող էին Միաբանության անդամ դառնալու պատվին արժանանալ։ Ահա թե ինչպես է նկարագրում Ա. Արփիարյանը Բարձրագույն կրթարանի խստաշունչ ռեժիմը։ «Սովորողի դատողությունը չէ, որ կզարգանա հոն, այլ միայն հիշողությունը կնմանի շտեմարանի մը, որուն մեջ կդիզվի ուրիշին արտադրած արդյունաբերությունները, բայց ինք արտադրելու կարող չէ։ Եվ ի՞նչ պետք ունի դատողության զարգացմանը։ Քննելու, բաղդատելու, վճռելու իրավունք չունի, ինչ որ սրբերը, հայրապետները, եկեղեցին, կրոնասեր տաղանդներն ավանդել են,— ահա ճշմարտությունը. իր ամբողջ կյանքը պիտի ըլլա տրված հրամաններու գործադրությունը. իր կամքն աբբահոր կամքն է, իր բոլոր երջանկությունն է հնազանդիլ։ Կույր հնազանդությունը անսասան հիմն է, որուն վրա երկու դար է, կանգուն կմնա Մխիթարյան Միաբանությունը»։[1]

Սակայն վարժարանի այս ծանր ռեժիմը թեև ունեցավ իր անժխտելի բացասական ազդեցությունն Ալիշանի վրա, բայց չկարողացավ նրան մինչև վերջ

---

[1] *Մասիս, 1890, 3941։*

կտրել արտաքին աշխարհից։ Պատանի բանաստեղծը, որի զգայուն սրտում արդեն բույն էր դրել ազատ լինելու ձգտումը, իր առաջին իսկ գործերում սկսեց երգել ազատ կյանքը, անկաշկանդ բնությունը, անդորր գիշերը, խոխոջացող առվակը։ Վանքի դաժան ռեժիմից հեռու լինելու այդ ցանկությունը որոշակիորեն զգացվում է Ալիշանի գրական երախայրիքի՝ «Երգք հանգրուանաց» խորագիրն ունեցող բանաստեղծաշարի յուրաքանչյուր գործում։ Այստեղ զետեղված առաջին ոտանավորը («Առ զեփիւռ ընդ ընգուզենեաւ») օրինակ, սկսվում է հետևյալ սրտառուչ տողերով.

Ի մամռապատ ընգուզենւոյս դալարակ
Յախորժալուր տերևաշարժ հովանիս,
Երգել կամիմ ի տարփալիս ագարակ
Զուա՛րթ զեփիւռ, կարկառ ի քնար նուրբ ծղրիս.

Ի զուարճ թռոյչ և ի հեծին հեշտաբեր
Անցեալ ընդ ծայր ծիրանազգեստ օդեանդ
Զովացո՛ զտապ արեգականս ոսկեհեր
Յօղատարափ թևօք փարեալ ի մարմանդ։

Այսպիսի տրամադրությունն էլ չթուլացող ուժով շարունակվում է ամբողջ բանաստեղծության մեջ։ Նույնպիսի ուրախ և աշխույժ բանաստեղծություն է հաջորդը՝ «Զեփիւռն այգւոյն»։ Ոգևորված նկարագրելով այգին մտնող զեփյուռին, որը եկել է թարմություն ու կյանք բերելու օրվա տապից թոշնած բույսերին, Ալիշանը հիացմունքով դիմում է ծաղիկ-ծաղկունքին.

Աւետիս ձեզ՝ վարդ,
Կակաչ երփնազարդ
Մեղու ոսկեթև
Ահա գայ թեթև
Զեփիւռ զուարթուն
Մարգաց կենսատուն։

Գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով է նկարագրված արևածագը «Ելք արեւու» բանաստեղծության մեջ, ոչ պակաս վարպետորեն է վերարտադրված գիշերն իր «Գոհարատիպ լուսատուով»՝ նույն բանաստեղծաշարի «Լուսին» գործում, բնության այլևայլ երևույթներն են ներբողված «Մարգագետին», «Առաւօտ», «Միջօրէ» և մյուս ոտանավորներում։

Հետաքրքրական են «Երգք հանգրուանացի», «Մշակ», «Եզող» (հոտաղ), «Արտունձք» (Արտ հնձողներ) ոտանավորները, ուր 20-ամյա բանաստեղծը պատկերել է աշխատավորության կյանքը։ Իր ամբողջ ստեղծագործության ընթացքում Ալիշանը այդ թեմային համեմատաբար քիչ է անդրադարձել, և այդ սակավաթիվ բանաստեղծություններում էլ պատկերելով աշխատանքը, այն երգում է խիստ վերացական ձևով։ Աշխատանքը բարիք է, այն ուրախության ու երջանկության աղբյուր է, ամոթ ու նախատինք ծույլերին, անբաններին, դաշտային արդար աշխատանքից փախչողներին։ Ի հակադրություն սրանց՝ հեղինակը երախտագիտության քաղցր խոսքով է հիշում ազնիվ ու արդար աշխատավորին, և նկարագրելով դաշտում նրա «Քիրտն ի ճակատն» աշխատանքը, ջերմորեն ավելացնում է, որ ամենքը միայն նրան են շնորհապարտ («Մշակ»)։

Այս ամենից բացի, Ալիշանի սկզբնական շրջանի ստեղծագործության մեջ տոկա է թախիծը, տրտմությունը, երևույթների որոշ հոռետեսական ընկալումն ու մեկնաբանությունը։ Այդ մոտիվն իրեն զգացնել էր տալիս դեռ 1839 թվականի բանաստեղծությունների մեջ, («Ի տարեգնացն», «Զանգակն գիշերային») ամենայն որոշակիությամբ հանդես գալիս 1840 թվականի գործերում («Հարբեն») և արդեն որպես երևույթ նկատելի է 1841 թվականից։ Եվ սա միանգամայն հասկանալի է. մոտ 10 տարի էր, ինչ նա հեռացել էր հայրենի երկրից ու հարազատներից, 1832 թվականին վախճանվել էր մայրը, ապա, 1834 թվականին հայրը, և այդ կորուստները, հասկանալի է, ծանր ազդեցություն էին թողել Ալիշանի վրա։ Օտարության մեջ, հեռու տուն ու տեղից, նրա միակ հարազատը մնում էր փոքր եղբայրը՝ Սերովբեն, սակայն վերջինս էլ տաքարյուն ու դյուրագրգիռ բնավորություն ունենալու հետևանքով՝ չհամապատասխանելով միարանության պահանջներին, 1836 թվականին ետ է ուղարկվում Պոլիս՝ հարազատներին։ Հայրենի մարդկանցից ու վայրերից հեռացած աշխույժ, զգայուն Ալիշանին չէին կարող ուրախացնել վանքի մռայլ կամարներն ու անհրապույր խուցը։ Թախծի ու տրտմության վերոհիշյալ տրամադրությունն ամենայն որոշակիությամբ բացահայտված է «Առաջին մանկութիւն և ի հարազատսն որ ոչ ևս են» բանաստեղծության մեջ, ուր հեղինակը բացահայտում է իր վշտի պատճառները.

Ո՞ր են աւուրքն այն, և ո՞ւր ամքն առաջին,
Ո՞ զժամանակ դարձուցանէր ինձ նախկին
Ըզմանկութիւն երբ ծաղկի վրտակաւ
Փափուկ ի տիպ համասպրամաղ գիրդ խոնաւ
Ո՞ւր այն դարուն տիոց, կենաց առաւօտ,
Մինչդեռ և լայր և խընդայր սիրտ անկարօտ։

Այսպիսի մռայլ տրամադրությամբ և այս տեսանկյունից էլ հեղինակը քննում է արտաքին աշխարհի պանազան երևույթները, քննում է կյանքը և հանգում է միանգամայն համարձակ եզրակացության, որի նմանը նախորդներից ոչ մեկի մոտ չենք հանդիպում. կյանքը տանջանք է, տառապանք, որ «եղածնելով առեղծանէ և ոչ ոք»։ Նման եզրակացությունն առավել համարձակ էր կրոնավորի համար, որին եկեղեցական բոլոր վարդապետությունները միաբերան սովորեցնում էին, որ կյանքն աստծու պարգևն է և տրված է մահկանացուին որպես գերագույն շնորհ։ Այս բոլորի փոխարեն Ալիշանը հայտարարում է, թե կյանքը է՝

Առասպե՛լ յաւուրց նախնեաց առարկեալ.
Եղծանելով առեղծանէ և ոչ ոք.
Բան մ'ի լեզուէ յանդարձ փախուստ երգեալ.
Ման թափեալ զոր չիր հընար ամփոփել.
Ծուխ բարձրացեալ եւ առժամայն բսպառեալ
Բոց փայլկան շոյտ ի շողալ ու անցանել. և այլն։

Կարելի է բերել այսպիսի մի քանի բանաստեղծություններ ևս, որոնցից պարզ երևում է, որ երիտասարդ բանաստեղծը վշտի, միայնակության ծանր ապրումներ է ունենում։ Այստեղից էլ ծագում է մի հարց. ո՞րն է ելքը, ի՞նչ անել մաշող հուսահատությունից ու թախծից դուրս գալու համար։ Եվ Ալիշանն

ունի այս հարցի պատասխանը ևս. պետք է հուսալ։ Բոլոր դժբախտությունների ու դժվարությունների միակ փրկիչն ու հենարանը հույսն է։

...Նեղ և տրկար է սիրտ մարդոյ ընդդէմ վշտաց
Չուժէ ժուժել, թե չկա յոյսն ամբարտակ
Ամենայն չունչ կենացն յուսով հոլովի
Առանց յուսո ո՛չ աչք շարժին ոչ շրթունք։

Բանաստեղծությունը («Յոյս») վերջանում է Ալիշանի՝ սույն ժամանակաշրջանի համար մի շատ հատկանշական տողով, որը բավական հստակությամբ բնորոշում է նրան։

Եվ վշտահար սիրտ ցորչափ կեայն՝ յուսով կեայ.

Այնուհետև Ալիշանի հոգում ծայր է առնում ներքին պայքարը։ Նա շուտով համոզվում է, որ հույսը հենց այնպես, դեռևս միջոց չէ հարատևող տխուր արամադրությունների դեմ պայքարելու համար։ Մնում էր դիմել աստծուն ու հայցել նրա օգնությունը, սակայն աստվածն էլ խուլ է ու անտարբեր մարդու տանջանքների հանդեպ։ Հոգեկան այս պայքարն աստիճանաբար ուժեղանում է, սաստկանում, հասնում մեծ չափերի, անլուր տվայտանքներ պատճառելով Ալիշանին։ Այս շրջանում նրա գրած բանաստեղծությունների մեջ շատերը կան, որոնք, չնայած իրենց կրոնական վերնագրերին (Տես հատկապես հատ. 4-րդ). ամենայն հստակությամբ ի հայտ են բերում վերոհիշյալ պայքարը, և հենց դրանք էլ այսօրվա ուսումնասիրողների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Իհարկե, Ալիշանն իր ամբողջ կյանքի ընթացքում գրել է ոչ քիչ թվով միանգամայն կրոնական բանաստեղծություններ, բայց այդ գործերի մեծ մասն ուշադիր քննելիս նկատում ենք հոգեկան այն պայքարը, որը մինչև կյանքի վերջն էլ տանջեց հեղինակին, և որը վերջնականապես չլուծվեց հօգուտ երկնայինի։

1843 թվականին Մխիթարյան միաբանության կյանքում տեղի է ունենում մի խոշոր իրադարձություն։ Մայիսից, Գ. Այվազովսկու ակտիվ նախաձեռնությամբ ու խմբագրությամբ սկսում է լույս տեսնել Մխիթարյան միաբանության ամենաերկարակյաց պարբերականը «Բազմավեպ» վերնագրով (այսինքն՝ բազմաթիվ տեղեկություններ հաղորդող, բազում բաների վիպող), որի էջերում Ալիշանը շարունակեց իր գրական և գիտական գործունեությունը։ Այստեղ տպագրված նրա բանաստեղծություններն ավելի կամ պակաս չափով աշխարհիկ բնույթ ունեն։ Դրանք գերազանցապես նվիրված են բնությանը, տարվա եղանակների պատկերմանն ու դրվատմանը։ Ամսագրի առաջին իսկ համարից սկսած «Ամսոց բնական նշանները» ընդհանուր խորագրի ներքո սկսում է հրատարակվել ամիսների մասին Ալիշանի գրած բանաստեղծությունները, որոնք իրենց որոշակի տեղն են գրավում նրա պոեզիայի մեջ։ Շարադրանքի ընթացքում հեղինակը խոսում է իր փոքրիկ բարեկամի՝ Գրիգորիկի հետ, նկարագրում է տարվա եղանակներն իրենց բնորոշ հատկանիշներով, ժողովրդին, աշխատավոր մարդուն իրենց տված պեսպես օգուտներով։ Ահա մի հատված «Յունուար» բանաստեղծությունից, ուր հեղինակը պատկերում է ձմեռվա այդ ամիսը։

Յո՞վ անց տարին և քու աւուրք Գրիգորիկ,
Ո՞ւր գեղանին գարուն, շընկան փոթորիկ
Անուշարերն և պարաշարժն ո՞ւր աշուն,
Եւ յո՛ր ցըրտին պատանս ծաղկունք ազազուն.
Ծայրակարմիր ո՛ւր առաւօտն այն խաղաղ
Եւ ի դաշտէն ամբարձիգ նուրբ շամանդաղ։

Ապա հարցասեր Գրիգորիկին բացատրվում է, որ հունվարին տեղացող ձյունը մանուկների համար զվարճությունից բացի, անհրաժեշտ է լավ բերքի համար, որ հունվարն իր հետ բերում է նոր տարի, և դրա հետ միասին նոր ու թանկագին հույսեր։ Գեղարվեստական մեծ վարպետությամբ է գրված մայիս ամիսը ներբողող բանաստեղծությունը, որը լավագույններից մեկն է ամիսներին նվիրված բանաստեղծությունների շարքում։ Ժամանակակիցներն իրենց հիշողություններում հաճախ են նշել, որ Ալիշանը ֆիզիկապես անգամ չէր կարողանում տանել ձմեռը, և ամբողջ ձմեռվա ընթացքում տենչանքով սպասում էր գարնանը։ Այդ տրամադրությունն էլ զգալի է այստեղ.

...Յարեաւ և օգ, բլուրք և ջուր
Հանգոյն լարից զուգահար,
Ի նախն իւր փայլ կենսատուր
Տատանեցան սիրաբար.

Վարդ և յասմիկ, մանիշակ
Ծաւալեցան բոյր ի բոյր
Ճընճղուկ, սարեակ և սոխակ
Երգս հնչեցին դաշն համբոյր.

Քիչ ավել կամ պակաս հաջողված մյուս գործերը ևս (Տես հատ. 1-ին, «Պատկերք ամսոց») դրեթե մի ամբողջ տարի զարդարեցին «Բազմավեպի» էջերը։

Ալիշանի պոեզիայի մեջ ընդհանրապես, և այս շրջանի պոեզիայում հատկապես, իրենց որոշակի տեղն ունեն եղբոր մասին գրած բանաստեղծությունները, որոնք ամենայն հստակությամբ ցույց են տալիս, որ նրա մոտ վճռականորեն շարունակում էր գերիշխել երկրայինն ու զգայականը։ Ասացինք, որ 1836 թվականին, Սերովբե Ալիշանյանը ետ էր ուղարկվել Պոլիս։ Ամերիկա մեկնելու կապակցությամբ 1845 թվականին նա մոտ երկու ամիս լինում է Վենետիկում, և ապա, նույն թվականի սեպտեմբերին մեկնում է, ծանր վիշտ պատճառելով Ալիշանին։ Բավական է ասել միայն, որ հոր ու մոր մահվան առթիվ Ալիշանը ոչինչ չունի գրած, իսկ եղբոր մեկնելու կապակցությամբ գրել է մի քանի հուզաթաթավ բանաստեղծություններ։ Դրանցից առաջինը վերնագրված է «Առ հարազատն իմ ծովաշուեալով յԱմերիկա» (1845), որը մի սրտակեղեք ողբ է, ուր Ալիշանն արցունքն աչքերին դիմում է բնությանը, ծովին, կայծակին, խնդրելով չվնասել Ամերիկա տարագրվող իր հարազատին։

Սիրով Սերոբիդ սիրտս ձայն առած
Լուռ միայնության ճրագիկն վառած,
Գիշերն գիշեր յանծանոթ ճամբա,
Մինչև յԱմերիկ քո հետ կը թրթռա.

Բայց ահա, ահեղ մրրիկը հուզում ու ալեկոծում է օվկիանոսը, լեռնացած ալիքների փրփուրը հասնում է ամպերին, շանթ ու կայծակ պատռում են եր-

կինքը, գալարվում ու ոռնում է ամբողջ «Ատլանտյանն վիթխարին»։ Սարսափից դողդողուն՝ Ալիշանը դիմում է տարերքին.

> Կեցի՛ր չար կայծակ. կեցի՛ր. ո՞ւր կիջնաս,
> Իմ Սևորն է հոն, յամպրն կախ մրնաս,
> Կամ թե ծովն ի ներս ըլլաս ցիր ու ցիր,
> Ուր շատ գանձ, շատ հույս, շատ լույս մարեցիր.

Անհանգստության այս տրամադրությունն ամբողջ բանաստեղծության ընթացքում աստիճանաբար ուժեղանում է և ի վերջո դառնում է եղբոր հանդեպ ունեցած ցավագին սիրո մի յուրօրինակ գլուխգործոց։ Նույնպիսի սրտաճմլիկ բանաստեղծություն է «Առ նոյնը»՝ գրված 1846 թվականին։ Նախորդի նման այստեղ էլ միակ գրաբար տողը վերնագիրն է։ Առաջին բանաստեղծությունից հետո, ինչպես տեսնում ենք, բավական ժամանակ է անցել, բայց Ալիշանի սերը դեպի իր եղբայրը շարունակվում է նույն ուժով։

Սակայն այս բանաստեղծությունները հետաքրքրական են նաև մեկ այլ առումով։ Նրանց շնորհիվ մենք կարող ենք պարզել, թե կոնկրետ ո՛ր թվականից Ալիշանն սկսեց գրել աշխարհաբար։ Բեկուդ վերևում բերված ցիտատները ցույց են տալիս, որ այդ գործերը գրված են գեղեցիկ արևմտահայերենով, բայց բանասիրական գրականության մեջ ընդունված է Ալիշանի աշխարհաբար առաջին գործերը համարել այն բանաստեղծությունները, որոնք ամփոփված են «Երգք Նահապետի» խորագրի ներքո, որոնցից առաջինը «Բաղմավեպում» հանդես է եկել 1847 թվականի կեսերին։ Սակայն ասվեց արդեն, որ եղբորը նվիրված բանաստեղծություններից առաջինը գրվել է 1845 թվականին, հետևաբար Ղևոնդ Ալիշանն աշխարհաբար լեզվով սկսել է ստեղծագործել 1845 թվականից սկսած։

Իհարկե, իրական աշխարհից դեպի վերացականը հեռանալու այն հուսահատ պայքարը, որը քննեցինք, մնացել էր և շարունակվում էր նույն ուժով փոթորկել (Տես «Անցեալս», «Ներկայս», «Սգաւոր գայլն»), ծանր ապրումներ պատճառելով հեղինակին։ Եվ այն ընդունումները, թե Ալիշանն ի վերջո դարձավ զուտ կրոնավոր, միայն հավատացյալ, զուրկ են որևէ հիմքից՝ Եթե իսկապես այդ այդպես լիներ, ապա Ալիշանը կդառնար մեկը այն շատ սովորական կրոնամոլ վարդապետներից, որոնք իրենց ամբողջ կյանքն անց կացրեցին կրոնա-սխոլաստիկական բանաստեղծությունների հատորներ գրելով, և որոնք այսօր հայտնի են միայն սակավաթիվ ուսումնասիրողներին։ Արտաքին աշխարհի, բնության, կյանքի հետ ունեցած կապի շնորհիվ էր, որ Ալիշանը կարողացավ տալ իր այն ընտիր բանաստեղծությունները, որոնք ապրում են մինչև այսօր։

«Բաղմավեպում» տպագրվող Ալիշանի բանաստեղծություններում շուտով սկսում է հանդես գալ մի նոր մոտիվ, որն աստիճանաբար պետք է գերիշխեր նախորդների համեմատությամբ, և վերջին հաշվով, այդ մոտիվն էր, որ անմահություն պիտի բերեր հեղինակին։ Դա հայրենասիրությունն էր, որի թույլ ու անորոշ դրսևորումը նկատելի էր դեռ սկզբնական շրջանի գործերում, և որն արդեն գիտակցված ձևով հանդես է գալիս 40-ական թվականներից սկսած։ Այս հանգամանքն ուներ իր միանգամայն հիմնավոր պատճառը։ XIX դարում Կովկասում ծավալված դեպքերը հստակորեն ցույց էին տալիս, որ եկել է պարսկական ու թուրքական բռնակալությունից հայ ժողովրդի ազատագրու-

թյան բաղձալի ժամանակը։ Ասպարեզ իջավ հայ գրողների զգալի մի խումբ, որոնք մարտնչելու, պայքարի ելնելու անսքող կոչ էին անում հայությանը Դրանց մեջ ուրույն և առանձնահատուկ տեղ ունի Ալիշանը, որը հենց սկզբից «Ի զէն, ի վրէժ» կոչող իր բանաստեղծություններով կանգնեց այդ գրողների առաջին շարքերում։ Հայրենասիրական այդ բանաստեղծություններից առաջինը կոչվում է «Ոգին Հայաստանեայց» (1844), ուր հեղինակը պատկերում է իր հայրենի երկիրը սիմվոլացնող ազատության Ոգուն՝ նստած Մասսի տրրտմաշուք հովանու ներքո, ավերված Հայաստանի մեջ, տարված մռայլ ու հոռետես խոհերով։

Իսկ այժմ ի նոյն մենացեալ սար ցրրտագին,
Նրստի լրոիկ Հայաստանեայց վեհ Ոգին
Ձեռն ի ծնոտի, յեց արմրնկամրն ի տապան
Թաւալ ի գոգս իւր ունելով հին մատեան
Վայրրնկեցիկ կայ գաւազանն առ սրնար.

Սակայն չնայած այս ծանր դրությանը, չնայած այն բանին, որ չկան երկիրը շենացնող Հայկի, Արամի, Տիգրանի, Արտաշեսի սերունդ դյուցազունները, Հայաստանը վերջնականապես ոչնչացված չէ։ Նա դեռ պիտի հառնի՝ փլատակներից, դառնա անմահների ու անմահության ստեղծողների երկիր։ Բնորոշ է այս տեսանկյունից բանաստեղծության վերջին քառյակը, ուր Հայաստանի Ոգին վստահ ու համարձակ հայտարարում է ի լուր ամենքին, թե Հայաստանը ողջ է։

Յայնժամանակ ի վեր վազեալ Ոգին յաթոռոյն
Երդուաւ ի թագն ի շուք անմահ ճակատուն,
Եթէ յաւերժն իմ Հայաստան դեռ ողջ է.—
Եւ կրկնեցին ամենքն բազում թէ ողջ է։

Հայրենասիրական նման գործերից են «Գարունք հայոց», «Դատաստանք Վասակայ մատնչի» (1845), «Աստղն Հայկին» (1846), «Ի մահ Տրդատայ ահեղազօրն արքայի հայոց» (1847) և բազմաթիվ այլ բանաստեղծությունները, ուր հեղինակը մերթ խանդաղատանքով նկարագրում է Հայկի հաղթանակն ու դարնան գալուստը Հայաստանում, մերթ զայրույթով պատկերում է Ավարայրի դավաճան Վասակի նողկալի արարքն ու նրա հատուցումը, մերթ էլ հուզված երգում է հայոց քաջարի արքա Տրդատի մահը թիկունքից արձակված թշնամու նետից և այլն։

Սկսվում է 1848 թվականի Վենետիկյան հերոսամարտը։ Ապստամբված քաղաքը մոլեգնող ժանդախտի պայմաններում սխրագործության հրաշքներ կատարելով, քաջաբար դիմադրում էր թվով գերազանց թշնամու ուժերին։ Այդ պայքարի ամբողջ 17 ամսվա ընթացքում գտնվելով Վենետիկում և տեսնելով իր իրավունքների պաշտպանության համար ոտքի ելած ժողովրդին, Ալիշանը գաղափարական որոշ էվոլյուցիա է ապրում։ Այս մասին է վկայում այն հանդամանքը, որ իր հայրենասիրական ամենաընտիր բանաստեղծությունները նա գրել է այդ թվականներին։ Անհրաժեշտ էր պահանջել, որոտալ, խոսել կրակի լեզվով, և Ալիշանը վերջնականապես թողնում է աշխարհաբարը, որով նա 1847 թվականին գրել էր «Հայոց աշխարհիկն» ու «Պլպուլն Ավարայրին» և կրկին ստեղծագործում է գրաբարով։ Հետաքրքրական է՝ որ խրոխտ, մարտնչող, պայքարի կոչող բանաստեղծություններ գրելիս Ալիշանը գերազանցապես

դիմում էր գրաբարին, իսկ երբ անհրաժեշտ էր խոսել մեղմ ու հանդարտիկ. անդրադառնում էր աշխարհաբարին։ Եվ գրաբարին անցնելու հետևանքով պատկերը մեկից փոխվում է։ Իրար են հաջորդում մրրկաշունչ, մարտակոչային բնույթի բանաստեղծությունների մի ամբողջ շարք, որոնք հանդիսանում են հայ դասական պոեզիայի լավագույն գործերը։ Հիշյալ շարքն սկսվում է «Բազմավեպի» 1848 թվականի ապրիլին տպագրված «Սեպուհն Վասակ» բանաստեղծությամբ, ուր հեղինակը պատկերում է հայոց զորավար Վասակ Մամիկոնյանի մղած հերոսամարտը պարսիկների դեմ, նրա հաղթանակը և քաջերի զոհվելը հայրենիքի համար։ Հենց սկզբից Ալիշանը խոսում էր որոտի լեզվով։

Շռինգն ահեղ հնչէ վրիժապահանջ յԱրեաց դրանէն
Կորանաց կանգնումն առնել բիւրոք զօրօք հրոսօք
Ի մարտ մահահոտ մրրկեալ Միհրան զէն յասպազէն.
Վերացեալ Վարդի հետևակօք, ձիովք, փղօք։
Հապա՛ մանկտի քաջս Հայոց զարթուցէ՛ք,
Ծարին ժանտից ըզսուսերս մերկացէք։

Հայոց դյուցազունները խիզախաբար պատրաստվում են կռվի, նրանց օգնության են շտապում «Վիրք, Հոնք, և Աղուանք», որոնք հայկական բանակների հետ մեկտեղ, Վասակի հմուտ առաջնորդությամբ նետվում են առաջ, թշնամուն ջախջախելու։ Մարտն ավարտվում է Հայաստան խուժած թշնամիների պարտությամբ և նրանց խուճապային, խայտառակ փախուստով։ Եվ փառավոր հաղթանակ տարած Վասակը դիմում է իր միացյալ զորաբանակին մի կոչով, որն անշուշտ, արտահայտում է նաև հեղինակի վերաբերմունքը, այն է՝ միշտ պատրաստ լինել հայրենիքի թշնամիների դեմ պայքարելու, նրանց հակահարված տալու։

Քառասունական թվականներից սկսած՝ Ալիշանի պոեզիայում հանդես է գալիս այն շատ հետաքրքրական առանձնահատկությունը, որը հետագայում շարունակվեց ու զարգացավ «Հայրունի» հատորում զետեղված բանաստեղծություններում, այն է՝ Ալիշանը Հայաստանի ու հայ ժողովրդի թշնամի ճանաչում է միայն պարսիկներին։ Այդ երևում է վերոհիշյալ բանաստեղծության մեջ, իսկ «Հրազդանի» չորրորդ քառյակում կարդում ենք.

...Իմ ընկերներն ո՞ւր են Հրազդան,
Մի՞թե պարսկին եղան գերուկ,
Մի՞թե ամենքն ի հող մտան։
Ա՜յ Հրազդան...

Հարց է ծագում. Ալիշանն ինչո՞ւ է իր խոսքի սուր ծայրն ուղղում պարսիկների դեմ։ Չէ՞ որ, ըստ էության, թուրքերն էին թշնամական հարաբերությունների մեջ հայերի հետ, իսկ պարսիկները 1828 թվականի Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը չէին դրժել ամբողջ XIX դարի ընթացքում և չդրժեցին այն ընդհուպ մինչև մեր օրերը։ Պատասխանը պարզ կդառնա, եթե նկատի ունենանք, որ նախ՝ Մխիթարյան միաբանությունը թուրքական օրիենտացիա ուներ, և հետևաբար, Ալիշանը չէր կարող իր ստեղծագործություններում անդրադառնալ թուրքական բռնակալությանը, կամ, առավել ևս, պայքարի կոչել նրա դեմ։ Եվ ապա՝ մեր գրականության դասական տրադիցիան բազմաթիվ տվյալների հիման վրա սովորեցնում էր, որ հայերի թշնամիները միշտ գերազանցապես եղել են պարսիկները։ Սկսած Վարդանանց հերոսամարտը ներբողող Եղի-

շեից մինչև XVIII դարի կեսերը, այդ տրադիցիան առավել կամ պակաս ուժով տիրապետող էր մեր դրականության մեջ։ Այդ էլ ժառանգել էին հայ գրողներից շատերը, հարկավ՝ նաև Ալիշանը։ Ահա թե ինչու նրա պոեզիայում «պարսիկ» հասկացողությունն ունի շատ ավելի լայն իմաստ և համազոր է «թշնամի» հասկացողությանը։

Հայ ժողովրդին պայքարի կոչող գործեր դրելով՝ Ալիշանն անդրադարձավ պատմական թեմատիկային, հայոց պատմությունից դուրս կոչեց Հայկին, Արամին, Վարդանին և այլն։ Սակայն պատմական անցյալին նվիրված նրա գործերը որոշակի կերպով տարբերվում են Մխիթարյան նախորդ հեղինակների նույնատիպ ստեղծագործություններից։ Պատկերելով պատմական իրականությունը, Ալիշանը վարպետորեն կարողացավ այն կապել իր ժամանակաշրջանի հուզող դեպքերի հետ, մեր ազգային հերոսների բերանով դիմեց հայ հանրությանը՝ նրան կոնկրետ առաջադրեց հայրենիքի փրկության, ժողովրդի ազատագրության հարցերը։ Մի բան, որ նախորդների մոտ չենք հանդիպում։ Բացի այս, պատմական թեմատիկային անդրադառնալը մինչև Ալիշանը եղած Մխիթարյան հեղինակների մոտ իր հետ բերել է մի թերություն ևս։ Եթե նախորդների ստեղծագործությունների հերոսները բացառապես արքաներ, նախարարներ ու իշխաններ են, ապա Ալիշանի մոտ արդեն հանդես են գալիս հիմնականում զինվորները, «արի մանկունք», «մանկտիք քաջ», որոնց էլ դիմում, խրախուս է կարդում բանաստեղծը, չանտեսելով, իհարկե, նաև զորավարին։

Վենետիկի հերոսամարտերի ընթացքում գրված գործերից նշանակալից են «Վերջին երդ վիրավոր բամբուահարին» և «Մասիսու սարերն» բանաստեղծությունները, որոնք հայ գրականության պատմության մեջ եզակի գործերի թվին են դասվում։ Եթե առաջին բանաստեղծության մեջ Փառենը սիրելի հայրենիքի համար մեռնում է առանց վարանելու ու երկրնտրանքի և մահը ծաղրելու համար երգը շուրթերին, ապա հաջորդում, մեծ Մասսի մեջ սիմվոլացնելով հայ ժողովրդին, Ալիշանը կոչ է անում չհանդուրժել տիրող լուծը, չհուսահատվել անհաջողություններից, այլ ոտքի ելնել ազատությունը կռվով նվաճելու համար։ Հայրենասիրական միանգամայն առողջ մտայնություն, որի մեջ անշուշտ իր որոշակի դերն ունի Վենետիկի ապստամբությունը։ 1849 թվականի ընթացքում, մինչև օգոստոս ամիսը Ալիշանն ստեղծում է իր ամենառազմաշունչ գործերը։ Վառոդի ծխի մեջ պարուրված Վենետիկում մարտական շունչ էին առնում Նահապետի երգերը։ Այսպիսի մի բանաստեղծություն է Ալիշանի աչքի ընկնող գործերից մեկը՝ «Ի Հայկն և ի բաստ հայկազանցը», որը մի տեսակ, նախապատրաստություն է «Բա՛մ. փորոտանի» համար։

...Հայկը կռվի է կոչում յուրայիններին։ Բելի սև հրոսակներն արշավում են հայոց սրբազան երկրի վրա, այն ստրկացնելու միտումով, և թեև նրանք բազմաթիվ են, բայց Հայկն աներեր յուրայիններին տանում է նրանց դեմ, քաջ գիտենալով, որ հայրենիքի ազատության համար մղվող այդ պայքարում իրենք պիտի հաղթեն։

Բոմբիւնք թմբկաց տոփեն լերանց ի լերինս
Հայկայ հրաւէր վառ զորդիս դիւցազունս
Ի հարաւոյ հեղեղեաց Բել բրռնաւոր
Արի՛ք ընդդէմ. հարցին, դարձցի՛ն կորակոր.

Խայտակն Հայկայ զհետ
Որդիք զուգահետ՝
Հասին արծուիք երագունք,
Շկահեն յաղեղանց
Խումբք արի արանց
Թօթափին ցուրտ դիակունք։

Բանաստեղծի խորին համոզմամբ հայերը պիտի հաղթեն ու չեն կարող չհաղթել, որովհետև նրանց ոգեշնչում են «Հոգիք հայոց հարանց», նրանց հետ են Տիգրանը, Վարդանը, Վահանը և հայ ժողովրդի ազատագրական պայքարի մյուս հերոսները։ Եվ հաղթանակը պատկերելուց հետո, ոգևորված Ալիշանը դիմում է վաստակած կտրիճներին, բացականչելով.

Կեցցո՛ւք, կեցցե՜ն Հայկազունք.

Հաղթությունը տարել են «Հայկազունք»։ Սա ասված է ամենայն որոշակիությամբ և ուշագրավ է, որ այստեղ բացակայում է կրոնական ոգին։ Եթե իր նախորդ մեկ-երկու գործերում Ալիշանը սովորաբար մաղթանքի մի քանի խոսք էր ասում աստծուն, ապա այստեղ այդ չենք նկատում։ Ընդհանրապես, հայրենասիրական թեմատիկայով գրված գործերի մեծ մասի մեջ կրոնն ու կրոնական մտայնությունը կամ առկա չեն, կամ հազիվ զգացնել են տալիս իրենց։

1849 թվականի օգոստոսի 20—22-ը ընկած ժամանակամիջոցում Ալիշանը գրում է իր գրական գոհարներից մեկը՝ «Երգ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոյ ի Շաւարշական դաշտին վրէժք» (Ո՜ն անդր յառաջ) բանաստեղծությունը, որն ավելի հայտնի է իր առաջին քառյակի առաջին երկու բառերով։ Դա հանրահայտ «Բա՜մ. փորոտանն» է, որը տարիներ շարունակ եղել է դասագրքերի ու երգարանների անբաժանելի զարդը, և մինչ այսօր էլ կատարվում է զանազան երգիչների ու երգչախմբերի կողմից։ Պատահական չէ, որ բանաստեղծությունը 1850 թվականին «Բազմավէպում» լույս տեսնելուց հետո մինչև այժմ ավելի քան 35 վերահրատարակություն է ունեցել։

Բա՜մ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱյրարատեան
դաշտն ի վայր
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրադայր.
Հրաւէր հայրենեաց հրաշակի ՚նդ հանուր,
Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր.

Իր քաջարի զինակիցներին դեպի արյունահեղ մարտն է առաջնորդում զորավար Վահանը, հետևյալ կրակոտ հորդորը կարդալով նրանց։

Որք երկնաւորի պսակին էք անձկոտ
Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ
Հա՛յ՝ ո՜ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժ քաջ Հայկազունք.
Հա՛յ՝ օն ի զէն զունդազունդ
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի ձախ մի յաջ.

Բանաստեղծությունն իր բովանդակությամբ նման է նախորդներին. պատկերված է Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ հայերի կռիվը թշնամու հորդաների դեմ և նրանց փայլուն հաղթությունը։ Բայց ամբողջ բանաստեղծությունը գրված է այնպիսի մրրկաշունչ, մարտական ոգով, դրա համար հատկապես ընտրված բառերն այնպիսի սպառնական բնույթ են տալիս գործին, որը բացառիկ է Ալիշանի ամբողջ ստեղծագործության մեջ։ Իր ոչ մի գործում նա այդքան ուղղակի, համարձակ ու աներկյուղ չի դիմել հայ հանրությանը ոտքի ելնելու, բռնապետությունը թոթափելու կոչով։ Եվ այդ մարտաշունչ տրամադրությունը շիկացած թելի նման անցնում է ամբողջ բանաստեղծության բոլոր ութ տների միջով։ Ճակատամարտի ելքն սկզբում անորոշ է, սակայն վրեժով լի կռվի նետված «Արի արանց մանկունք» վերջնականապես հաղթում են թշնամուն, ստիպում են նրան փախուստի դիմել։ Հիացած է Ալիշանը. անսահման, անպարփակ երջանկությամբ նա երգում է հակառակորդի խայտառակ պարտությունը և կոչ է անում մինչև վերջին մարդն արտաքսել նրանց հայրենիքից։

Այս ոգով էլ շարունակվում է բանաստեղծությունը մինչև վերջ և ավարտվում է գեղեցիկ մտածված մի պատկերով։ Մամիկոնյանների մարտադրոշը հպարտ ու վեհորեն բարձրացված է սպանված թշնամիներով լի արյունոտ ռազմադաշտի վրա, որպես համայն հայության ազատության վեհ սիմվոլ։

Այս է մեր հեղինակի տարիներ շարունակ փայփայած իղձը՝ ճնշողներից ազատ տեսնել իր սիրելի հայրենիքը. մի իղձ, որը նրա կենդանության օրոք, ավա՜ղ, վիճակված չէր իրականանալու...

Մինչև 60-ական թվականները Վենետիկի ընկնելուց և իտալական ռեվոլյուցիայի պարտությունից հետո անգամ, ճիշտ է, ոչ առաջվա թափով, Ալիշանը շարունակում էր գրել իր ընտիր հայրենասիրական բանաստեղծություններն ու պոեմները։ Հիշենք դրանցից մի քանիսը. «Ի նախագահն ի Մասիս», «Հառաչումն Գագկայ Վերջնոյ», «Հրազդան», «Վիլայրի խորխոռունեաց տեառն», «Մասիսու սարերն», «Բամբիռն Հայկազնի» և այլն, և այլն։ Գործեր, որոնք առընդմիշտ մտել են հայ դասական պոեզիայի ոսկե ֆոնդը։

1851 թվականին Մխիթարյան միաբանության ղեկավարության որոշմամբ Ալիշանը գործուղվում է Լոնդոն, Ռաֆայելյան վարժարանի ֆինանսական հարցերի կապակցությամբ, ուր և մնում է ավելի քան վեց ամիս։ Այս ուղևորությունն Ալիշանի համար արդյունավետ է լինում նրանով, որ վերադարձին նա իր հետ բերում է թվով 30 բանաստեղծություններ։ Այդ գործերի մեծ մասը Ալիշանի քնարի լավագույն արտադրանքներն են, որոնք արտահայտում են հեղինակի բուռն, այրող սերը դեպի իր հայրենի երկիրը։ Ոչ մի տեղ, հայրենիքի նկատմամբ ունեցած պանդուխտի կարոտն Ալիշանն այնքան ուժեղ չի երգել, ինչպես այս բանաստեղծություններում։ Ահա դրանցից մեկը.

Ո՜հ կարօ՜տ, կարօ՜տ. զի՞նչ բուռն ի մարդում բան զայս կիրս
Կարծես անմահից անգամ զոլ սա 'րնավիրս
Ո՜հ կարօ՜տ, կարօ՜տ. մեծ հեղձամղձուկ զիս առնէ
Յափունս բացական, և այցելու ինձ որ չէ...

Որ այս սրտամաշուկ կարոտի մեջ իր զգալի բաժինն ունի դեպի հեռավոր հայրենիքն ու հարազատներն ունեցած զգացումը, այդ որոշակիորեն նկատվում է ամենուրեք։ Բանաստեղծություններից մեկը սկսվում է «Կրկնա-

կի պանդուխտ եմ դարձել իմ հայրենիքից ու մտերիմներից» ձևով, և մինչև վերջ էլ հեղինակը զարգացնում է այդ միտքը։

Բոլոր այս փոփոխությունների պատճառը ուղևորությունն ու նոր միջավայրն էր։ Ալիշանն աստիճանաբար սկսեց հասկանալ, որ վանքից, նրա քարե-պեն ընդերքից, կրոնական սրբազան սարսուռներով լի աղոթքներից դուրս գոյություն ունի ուրիշ՝ ավելի առողջ ու իսկական կյանք, լի աշխարհիկ աղմուկներով ու հուզումներով. մի կյանք, որի զարկերակի հզոր բաբախումները չափազանց աղճատված էին թափանցում Մխիթարյան վանքի սահմաններից ներս։ Եվ Ալիշանը, արդեն զգալով ու հասկանալով այդ ամենը, հավատարիմ ղեկավարության կարգադրությանը, նորից է վերադառնում վանք, նորից է դառնում նրա կաշկանդող միջավայրի լուռ ու տանջվող դերին։ Սրան միանում էին կյանքի ու հավիտենականության մասին այն թախծալի խոհերը, որոնց մի մասը համառոտակի քննեցինք, և որոնք ընդմիշտ տանջեցին նրան։ Ահա, օրինակ, թե ինչպիսի՝ ներքին պայքարից հոգնած տողերով է դիմում ինքնիրեն Ալիշանը.

Ա՜հ, գլուխ իմ, ա՜հ, սիրտ իմ, ցե՞րբ հեծես. արդ լուռ լեր,
Գուցէ լրեալ մօր դիւրազգածի կաթոգին
Եւ սիրտ խոց առեալ հառաչիսցէ կարեկիր
Վերայ գրկաց զաւակին։
Այլ ո՞ւր և իմ մայր, որ ժողովէր զիս ի ծոց.
Ո՞ւր որ ժողովէր զհատկրլեալ շունչս ահ ընդ ահ,
Որ մատն արկանէր ի գլուխ ու ի սիրտ յարակոծ
Եւ խաղաղէր գեթ մի պահ։

Մինչև 1870 թվականը տևեց Ալիշանի գործունեության փթթուն շրջանը, որի ընթացքում վերը նշված հակասությունների հետևանքով կրոնական, հետևաբար այսօր անարժեք, բանաստեղծություններ գրելով հանդերձ, նա տվեց «Շուշանն Շաւարշան», «Վասբնկայն գերեզմանաց հայոց», «Հայ հանճար» ստեղծագործություններն ու գրարար մի շարք արժեքավոր գործերը։ Ինչպես և նախորդ դեպքերում, այնպես էլ այստեղ, հանդես է գալիս աղատասեր ու իր հայրենիքի փրկության ջերմ նախանձախնդիր Ալիշանը, որը մերթ ջերմագին ողբում է ավերված հայրենիքը, մերթ կոչ է անում ելնել անհավասար պայքարի թշնամիներին արտաքսելու համար, մերթ պահանջում է չմոռանալ այն քաջերին, որոնք «սուրն ի ձեռին» ընկել են հերոսաբար և այլն։

Հետագայում Ալիշանն այլևս երբեք չկարողացավ բարձրանալ 1847—1870 թվականներին գրված գործերի մակարդակին։ Այդ է վկայում 1876 թվականին հրատարակված «Աղոթք արեղայի» գրքույկը, որը պարունակում է այրուբենի կարգով դասավորված 35 աղոթք, և զանազան առիթներով հրատարակված ընդհանուր առմամբ կրոնական բնույթի բանաստեղծությունները։ Սակայն դրանք չեն, որոնք բնորոշում են մեր հեղինակին։ Ալիշանը հայ գրականության մեջ իր մշտակայուն տեղն ունի շնորհիվ այն կրքոտ հայրենասիրական բանաստեղծությունների ու պոեմների, շնորհիվ «Հայրունի» հատորում ամփոփված այն ընտիր գործերի, որոնք համաժողովրդական ճանաչում են ստացել և անկապտելի դրական փառք են ստեղծել Ալիշանի համար, դարձնելով նրան հայ դասական պոեզիայի Նահապետը։